

խորտակուած էր , թէ թագաւորը մեռած էր եւ հազիւ կը ջանար անհաւատալի յոյսի նշոյլ մը նշմարելու : Եւ ահա առագաստաւոր մը հորիզոնին վրայ : Անոր աչքերը այնքան անդամներ խարուեր էին որ չէր կրնար յուսալ եւ կարծել թէ դա կիսրոսի պատերազմական նաւ մ'ըլլար : Եւ սակայն նաւը կը մերձենայ . անոր բարձր կայմին վրայ կը ծածանի լայն դրօշակ մը . յիրաւի կիսրոսեան նաւ մ'է : Կը մտնէ նաւահանդիսաւ . կը մերձենայ . հո՛ն է Ալիէնօր . բայց հոն չէ Պետրոս թագաւորը , քանի որ չէ պարզուած արքայական դրօշակը . եւ սակայն անտարակոյս նաւապետը պիտի լուր հաղորդէ թագաւորին մասին :

Յովհան Պրիենն է , արքայական բանակին ամէնէն երիտասարդ ասպետներէն մէկը , որ կը վարէ նաւը . նա թագաւորին կողմէ կուգայ . Պետրոս ողջ է եւ յաղթական . բայց կատաղի փոթորիկի մը պատճառով կը ստիպուի Սուրիայի ծովեղբին մօտերը հաւաքել իր ցիր ու ցան նաւերը : Պետրոս կը վերադառնայ , բայց պիտի իջնէ Լիմասոլ , ուրկէ ուղղակի Նիկոսիա պիտի երթայ :

Ամբոխը նաւամատոյցը դիմելով ցնծութեան աղաղակներով կ'ընդունի աւետաբեր ասպետը , եւ թագուհին սրտի հանգստութեամբ կը հրամայէ աճապարանքով փոխադրուիլ Նիկոսիա , ուր պիտի դիմաւորէ Աղէքսանդրիայի յաղթականը :

(Շարունակելի)

Թրդմ. Հ. Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ե. ԵՐԱՋ

*Երազի գաղափարը՝ fniā (սանսկր. «svārṇa-» , jn̄ān. ὕπνος , լատ. «sōmnus» , կիւմր. «chūn» = Schlaf, Traum ,) հնդեւր. «*svépnos» եւ «*supnos» ձեւերէն խառնուած «*svupnos»-էն «անուրջ-ք» = sogno եւ «տեսիլ» = visione գաղափարներն ալ կը նշանակէ : Հմմտ. այս վերջին նշանակութեամբ՝ լատ. vi-sio (video) , հայ. skuhi (տեսանեմ) = Traumgesicht, Gesicht բառերը :*

*Հայերէն «երազ» ձեւը՝ հնդեւր. «*drok̑os» է , որ յուն. δέρκομαι = sehe , անց . δέδօօκα = blicke = սանսկր. «dadárça» = ավեստ. «dadarəsa» = sehe , հին իրլ. «dere» = Auge եւ այլ բառերու հետ կապունի : Հնդեւր. «tr-» հայ. «եր-» է (զ. օ. «երեք» = հնդեւր. «*tréyes») , ուրեմն այսպէս ալ հնդեւր. «dr-» կրնայ ըլլալ , ըստ իս , հայերէնի մէջ «եր-» միայն : Հնդեւր. «o» հայ. «աօ»ի ալ կը համապատասխանէ , զ. օ. «ալի-ք» = հնդեւր. «*polio» = յուն. πολιός եւ ուրիշներ : Իսկ հնդեւ . «k¹» հայերէնի մէջ «ս» է զ. օ. «տասն» = հնդեւր. «*dek¹m» . բայց զ ալ «vor Tönenden : սկիզ-քն , Anfang⁴ , սկս-անի-մ» fange an» տ. Հիւբշման , իր ծանօթ Քերականութեան մէջ , Ա. 408 :*

Budapest.

ԴՐԱԿՈՆ ԲԱԴՐՈՒԹԻՎԱՆԵԱՆ

Անեցի